

**ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ՝
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ և ՄԻԵԴ
ՆԱԽԱԴԵՊԱՅԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՆ**

Իսափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով: Իսափանման միջոցներից ամենախիստը կալանավորումն է, որն իրենից ներկայացնում է նախատեսված տեղերում և պայմաններում անձին կալանքի տակ պահելը: Կալանավորումը և դրա այլընտրանքային խափանման միջոցը մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցագործության համար, որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք և այլն: Կալանավորումը խափանման միջոցների տեսակների մեջ ամենախիստն է և պետք ունենա բացառիկ բնույթ:

Այսպես.

Մարդու ազատությունը, որպես բարձրագույն արժեք երաշխավորված է թե ներպետական օրենսդրությամբ, թե՛ միջազգային պայմանագրերով: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով: Ոչ ոք չի կարող քրեական գործով, կալանավորվել, ենթարկվել դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների, այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայից և Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներից ակնհայտ է դառնում, որ ազգային դատական մարմինները պարտավոր են հաշվի առնել բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ են պարզելու համար, թե կա արդյոք հասարակական շահ, համապատասխան ու բավարար պատճառ, որը հաշվի առնելով անմեղության կանխավարկածը, արդարացնում է նահանջը անձի ազատության իրավունքի հարգանքից: Անձին ազատությունից զրկելու համար անհրաժեշտ հիմքերը պետք է հիմնավորված լինեն կոնկրետ փաստացի նյութերով, տվյալներով: Մասնավորապես, Եվրոպական դատարանը սահմանել է. **«իրավաչափ է այն մտավախությունը, որ մեղադրյալը**

կխոչընդորի մեղադրանքի կողմի գործունեությանը: Սակայն դատարանը պետք է սա հաստատի իբրև իրավաչափ մտահոգություն, որն առկա է հարկապես տվյալ մեղադրյալի դեպքում, այլ ոչ թե անորոշ և վերացական» (Քլուբն ընդդեմ Բելգիայի գործով):

«Գործով ճշմարտությունը բացահայտելու ընթացքին միջամտության վրանգի (մինչդարական վարույթում գործի քննությանը խոչընդորելու) հնարավորությունը չպետք է ընդունել վերացականորեն, պետք է գոյություն ունենան դա հաստատող կոնկրետ փաստացի հանգամանքներ, որ ազատագրկված անձը կարող է օգտվել դրանցից» (Տրզասկան ընդդեմ Լեհաստանի):

«Պետք է հիմնավորված ռիսկ լինի, որ մեղադրյալն ազատ արձակվելու դեպքում կձեռնարկի այնպիսի քայլեր, որոնք կխոչընդորեն արդարադատության իրականացմանը» (Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի):

«Կրկին հանցագործություն կատարելու վրանգը պետք է ռեալ լինի տվյալ մեղադրյալի դեպքում» (Րինգեյզենն ընդդեմ Ավստրիայի):

«Վճռաբեկ դատարանն իր հերթին 30.08.2007թ. կայացված ՎԲ-132/07 նախադեպային որոշման մեջ նշել է՝ «...կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: **Ընդ որում, այդ կանխատեսվող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը:**»

Մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ:

Նույն նախադեպային որոշման մեջ Վճռաբեկ դատարանը նշել է. «Կալանավորումը քրեական գործի քննության ընթացքում կիրառվող խափանման միջոցներից ամենախիստն է: **Այն պետք է ընտրվի միայն այն ժամանակ, երբ խափանման մյուս միջոցները քրեական գործի վարույթի ընթացքում չեն կարող ապահովել անձի պատշաճ վարքագիծը:** «Քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը»:

Կալանավորման վերաբերյալ Եվրոպական դատարանի և ՀՀ վճարելի դատարանի որոշումների, ներպետական օրենսդրության և Կոնվենցիայի լույսի ներքո պարզ է դառնում, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, մարդու այլ հիմնական իրավունքների հետ մեկտեղ, անօտարելի և բարձրագույն արժեք է: Հետևաբար առավել զգուշավոր պետք է լինել նշված իրավունքի սահմանափակման իրավաչափության հարցը որոշելիս, և պետք է բացառապես ելնել մարդու իրավունքները հարգելու, մարդու իրավունքների սահմանափակման միջոցով հիմնական իրավունքը բովանդակազրկելու անթույլատրելիության սկզբունքներից:

Աղավնի Մադոյան

ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ